ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ
(ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐ. ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

●Արտատպված «Երևկոյան Երեւան» օրաթերթի 26 Մայիս 1988ի համարէն, ստորեւ կուտանք պատմաշխարհագրական բնակիրն տեղեկութիւններ Լեռնային Ղարաբաղի մասին, հարցնակերն տեղեկանալու համար մեր ընթերցողներուն գիտելիքները մայր հայրենիքի այս կարեւորագոյն շրջանին վերաբերեալ, զոր համայն հայութիւնը կը պահանջէ վերակցել մայր հանրապետութիւնն՝ Խ. Հայաստանին:

***

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքն զբաղեցնում է պատմական Հայաստանի ամենաընդարձակ նահանգներից մէկի՝ Արցախի լեռնային հատուածի մի մասը:

Արցախը մ. թ. ա. 2րդ դարից մինչեւ մ. թ. 5րդ դարը եղել է Արշակունիների ու Արտաշէսեանների հայկական թագաւորութեան բաղկացուցիչ մասը: 5–7րդ դարերում այն մուտքագրած է եղել Սասանեան Պարսկաստանի կազմած Ատրպատական նահանգի մէջ, իսկ 7–9րդ դարերում դառնում էր Արաբական խալիֆայութեան ժամանակաշրջանում կազմաւորուած Արմենիա-Սիւնիք-արքայութեան կազմում: Սկսած 10րդ դարից, երբ Հայաստանը չատ թէ քիչ անկախութիւն է ձեռք բերում (Բագրատունիների ժամանակ), Արցախում կազմաւորւում են մի քանի հայկական իշխանութիւններ, որոնք համարեա թէ անկախ գոյութիւններ էին:

Անհրաժեշտութեան դէպքում դրանք միաւորւում եւ ընդհանուր ուժերով պայքարում էին արեւելեան տափաստանային վայրերից ու հարաւից յանախակի յարձակուող Թաթար-մոնկոլների, Թուրք-սելջուկների ու արաբների դէմ: Արցախի հայկական այդ իշխանութիւնները միասին մի հզօր վահան էին դարձել արտաքին թշնամիների դէմ՝ ի պաշտպանութիւն կենսաբանական Հայաստանի:

16–17րդ դարերում Արցախի այդ իշխանութիւններից՝ մելիքութիւններից հինգը հանրայոյտ էին եւ միասին կոչւում էին Խամսայի մելիքութիւններ: Դրանք Խաչէնի, Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի եւ Գիւլիստանի մելիքութիւններն էին: Ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը մօտաւորապէս համընկնում է այդ հինգ մելիքութիւնների տարածքին:

Մարզի տարածութիւնը կազմում է 4.4 հազար քառ. քմ.: Այն բաժանուած է հինգ վարչական շրջանների՝ Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի:

Տարածքի տեսակէտից ամէնից ընդարձակը Մարտակերտի շրջանն է (1700 քառ. քմ.): Յաջորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Ասկերանի (900 քառ. քմ.), Մարտունու (800 քառ. քմ.), Հադրութի (700 քառ. քմ.), Շուշիի (300 քառ. քմ.) շրջանները:

1988 թ. Յունուարի 1ի դրութեամբ Լեռնային Ղարաբաղում կայ 215 բնակավայր, որից 200ը ամբողջապէս հայաբնակ են: Մարզում կայ չորս քաղաք եւ չորս քաղաքատիպ ատան: Համեմատաբար խոշոր քաղաքը մարզային վարչական կենտրոն Ստեփանակերտն է, որի բնակչութիւնը կազմում է 50 հազար մարդ: Միւս մեծ քաղաքը Շուշին է: Այն տրպա-Ղարաբաղ աշխարհի հին քաղաքն է, 1752 թուականից բերդ-ամրոց էր, իսկ 1840 թուականից կոչուել է քաղաք:

Բարձրադիր, դեղատեսիլ սարահարթի վրայ փռուած Շուշին մինչեւ 20րդ դարի սկիզբը եղել է Անդրկովկասի մարդաշատ, մշակութային, առեւտրական խոշոր կենտրոններից մէկը: Բարձրութիւնը ծովի մակերեւոյթից աւելի քան 1300 մետր է: Սարահարթը, որի վրայ տեղադրուած է Շուշին, երեք կողմից շրջապատուած է խիստ զառիթափ, անդնդախոր, բայց անգուգական դեղեցկութիւն ունեցող կիրճով, որտեղով հոսում է Կարկառ գետը: Մեղմ կլիմայի, լեռնային մաքուր օդի, դեղատեսիլ դիրքի ու հանգիստի ջրի շնորհիւ Շուշին առողջարանային, հանգստեան եւ տուրիստական կարեւոր քաղաք է դարձել:

Քաղաքը արագ զարգացել է յատկապէս 1805 թուականից յետոյ, երբ Ղարաբաղը միացուել է Ռուսաստանին: Այդ ժամանակից արագօրէն զարգանում են մշակութային եւ առեւտրական կապերը Ռուսաստանի եւ եւրոպական երկրների հետ: 1820ական թուականներից այստեղ բացւում են տպարան, հայկական դպրոցներ, հրատարակւում գրքերը թերթեր, կազմակերպւում են թատրոններ, ակումբներ: Ռաֆֆու, Պ. Պռոշեանի Ղ. Աղայեանի, Լէոյի եւ հայ այլ խոշոր գրողների որոշ գրքեր առաջին անգամ տպագրուել են Շուշիում: Առհասարակ նախասովետական շրջանում Շուշին հայ մշակութային կեանքի ծաղկման գործում Անդրկովկասում եղակի դեր է խաղացել: Դպրոցական եւ տպագրական գործի, արուեստի, արհեստագործութեան, առեւտրի զարգացումը կարեւոր դեր է խաղացել Շուշի քաղաքի լայն ճանաչման գործում: Այն սերտ կապերի մէջ է եղել ժամանակի խոշոր քաղաքների հետ: Պատահական չէ, որ այս քաղաքը, տուել է գիտութեան, մշակոյթի, արուեստի բոլոր ոլորտաւորների խոշոր գործիչներ: Շուշիում են ծնուել կուսակցական, պետական, տնտեսական ակնառոյ գործիչներ, պատմաբաններ գրողներ, այդ թուում՝ Իսան Թեւոսեանը, Սարգիս Կասեանը, Սահակ Տէր Գաբրիէլեանը, Աշոտ Յովհաննիսեանը, Այիքազունի Բեկզադեանը, Հայկ Գուլիքիսեանը, Մուրացանը, Լէոն եւ չատ այլ հայ գործիչներ: Այստեղ է ծնուել Սովետական Միութեան կերկնակի հերոս Նելսոն Ստեփանեանը:

Ճարտարապետական տեսակէտից Շուշին մեծ հետաքրքրութիւն ներկայացնող եւ հիմնականում հայաբնակ քաղաք է եղել մինչեւ 1920 թ. ողբերգութիւնը: Քաղաքի հայաբնակ թաղամասերը զբաղեցնում էին նրա բարձրադիր մասը եւ կոչւում էին Ղազանչեցոց, Ագուլեցոց, Մեղրեցոց ու այլ թաղամասեր: Հայկական թաղամասերը կառուցապատուած էին ճարտարապետական տեսակէտից հետաքրքիր բնակելի ու հասարակական չէնքերով, ունեցել են իրենց կենտրոնները, դպրոցները, ակումբը, գրադարանները, խանութները, հիւրանոցները ու եկեղեցիները: Մեծ հետաքրքրութիւն էին ներկայացնում Ղազանչեցոց Ամենափրկիչ տաճարը, Կանաչ ժամը, Ագուլեցոց Ս. Աստուածածին, Մեղրեցոց Ս. Աստուածածին եկեղեցիները, Ղանդաիրեան թաղամասը, ուշագրաւ դպրոցը ու չատ այլ քարակերտ չէնքեր:

Ս. ՄԵԼՔՈՒՄԵԱՆ,
Աշխարհագրական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր

(Վերջը յաջորդով)